

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

5.1. ՄԱԿ-ի կողմից երաշխավորված ԱՄԴ Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմը (հաստատված ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 30-րդ նստաշրջանում, 05.03.99թ.)

ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի կողմից հաստատված, ինչպես նաև Միջազգային վիճակագրական ծրագրերի և ներդաշնակեցման Աշխատանքային խմբի կողմից երաշխավորված Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմում ընդգրկված 15 ցուցանիշներից 33 Ազգային վիճակագրական ծառայությունը 2004թ. հունվար-սեպտեմբերին տեղեկատվություն է ներկայացնում հետևյալ 10 ցուցանիշների վերաբերյալ.

1. Մշտական բնակչության թվաքանակն ըստ սեռի

(1000 մարդ)

	Ամբողջ բնակչությունը	Կին	Տղամարդ
2004 թ. հունվարի 1-ի դրությամբ	3212.2	1665.5	1546.7
2003 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ	3210.6	1665.8	1544.8
2004 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ	3213.6	1666.2	1547.4

2.Կյանքի սպասվող տևողությունը հաշվարկված ծննդից՝ ըստ սեռի 2002-2003թթ.¹

(տարի)

	Ամբողջ բնակչությունը	Կին	Տղամարդ
2002թ.	73.0	75.9	69.8
2003թ.	72.9	75.8	69.9

3. Մանկամահացությունն ըստ սեռի (մինչև 1 տարեկան)

(1000 կենդանածնի հաշվով)

	Ընդամենը	Աղջիկներ	Տղամներ
2003թ. հունվար-դեկտեմբեր	12.0	10.2	13.4
2003թ. հունվար-սեպտեմբեր	11.7 [♦]	10.0 [♦]	13.2 [♦]
2004թ. հունվար-սեպտեմբեր	11.3	9.7	12.7

4.Երեխաների մահացությունն ըստ սեռի (մինչև 5 տարեկան)

(1000 ծնվածի հաշվով)

	Ընդամենը	Աղջիկներ	Տղամներ
2003թ. հունվար-դեկտեմբեր	13.6	11.9	14.9
2003թ. հունվար-սեպտեմբեր	13.4 [♦]	11.8 [♦]	14.7 [♦]
2004թ. հունվար-սեպտեմբեր	12.6	11.1	13.8

5. Մայրական մահացությունը 100.000 կենդանածնի հաշվով 2003թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 22.4 (8 դեպք), 2003թ. հունվար-սեպտեմբերին՝ 23.5 (6 դեպք),իսկ 2004թ. հունվար-սեպտեմբերին՝ 25.4 (7 դեպք):

6. Կանանց կողմից հակաբեղմնավորիչ միջոցների օգտագործման ընդգրկվածությունը 1000 պտղաբեր տարիքի (ֆերտիլային) կնոջ հաշվով 2003թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 17.0%:

¹ Տարիների այն թիվն է, որ ծնվող սերունդը միջին հաշվով պետք է ապրի, պայմանով, որ այդ սերնդի ողջ կյանքի ընթացքում մի տարիքից մյուսն անցնելիս մահացությունը յուրաքանչյուր տարիքում հավասար լինի բնակչության մահացության տվյալ ժամանակահատվածի մակարդակին:

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

7. Ուսումնառության միջին տևողությունը դպրոցներում 2004/2005 ուսումնական տարում կազմել է 10 տարի:

12. ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2004թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 386944 դրամ, կամ 709.8 ԱՄՆ դոլար:

14. Գործազրկության մակարդակը (պաշտոնապես գրանցված) 2004թ. սեպտեմբերին կազմել է 9.4% և 2003թ. նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել 0.7 տոկոսային կետով: Ընդ որում, կանանց գործազրկության մակարդակը 2004թ. սեպտեմբերին կազմել է 13.2% և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել 0.6 տոկոսային կետով, իսկ տղամարդկանց գործազրկության մակարդակը՝ 5.7% և նվազել 0.8 տոկոսային կետով:

15. 2004թ. հունվար-սեպտեմբերին տնտեսության մեջ զբաղված է եղել ՀՀ բնակչության 34.7%-ը, ընդ որում՝ կանանց՝ 31.8% և տղամարդկանց՝ 37.8 %-ը: